Էկ, հետևիր ինձ.
միջոցառումներ

Ընտանեկան երեկոյի համար, սուրբ գրությունների ուսումնասիրության համար, կամ պարզապես զվարճանալու համար:



Օգոստոսի 26-ից սեպտեմբերի 1-ը

Ամուր հիմքեր

ՀԵԼԱՄԱՆ 1–6

Հելամանը ուսուցանեց իր որդիներին կառուցել իրենց կյանքը Հիսուս Քրիստոսի ամուր հիմքի վրա (տես Հելաման 5.12): Հիմքն այն է, ինչի վրա ինչ-որ բան է կառուցվում: Հզոր հիմքն ամուր է դարձնում ամբողջ շենքը՝ նույնիսկ փոթորիկների ժամանակ: Կառուցեք երկու աշտարակ՝ մեկը ամուր հիմքի վրա, մյուսը թույլ հիմքի վրա: Ո՞ր աշտարակը կլինի ավելի կայուն: Ինչպե՞ս կարող ենք կառուցել մեր կյանքը Հիսուս Քրիստոսի վրա:

Կրտսեր խմբի երեխաների համար.

Օգնեք ձեր փոքրիկներին գտնել մի բան, որն իրենց կարծիքով իսկապես ամուր է: Ի՞նչ գտան նրանք: Սովորեցրեք, որ մենք կարող ենք ամուր լինել Հիսուս Քրիստոսի հետ:

Սեպտեմբերի 2-8-ը

Վկայություն Քրիստոսի մասին

ՀԵԼԱՄԱՆ 7–12

Սուրբ գրություններում շատ մարդիկ ուսուցանել և վկայել են Հիսուս Քրիստոսի մասին (տես Հելաման 8.16-20): Դուք նույնպես կարող եք սկսել կառուցել ձեր վկայությունը Նրա մասին: Վկայությունը մի բան է, որին դուք հավատում եք կամ գիտեք, որ ճշմարիտ է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին: Գրեք ձեր վկայությունը և դրանով ձեր ընտանիքի կամ ընկերների հետ կիսվելու փորձառություն ձեռք բերեք:

Կրտսեր խմբի երեխաների համար.

Հարցրեք ձեր փոքրիկներին, թե Հիսուս Քրիստոսի հատկանիշներից որոնք են նրանք սիրում: Ապա կիսվեք նրանց հետ Փրկչի մասին ձեր վկայությամբ:

Սեպտեմբերի 9-15-ը

Սամուելը բարձրանում է պատի վրա

ՀԵԼԱՄԱՆ 13–16

Սամուել մարգարեն բարձրացավ պատի վրա, որպեսզի մարդկանց սովորեցնի Հիսուս Քրիստոսի մասին (տես Հելաման 13.4): Բացեք 12-րդ էջը և պատրաստեք այս ձեռագործը, որը կօգնի ձեզ պատմել Սամուելի պատմությունը:

Կրտսեր խմբի երեխաների համար.

Օգնեք ձեր փոքրիկներին կանգնել աթոռի վրա և կիսվել, թե ինչ գիտեն Հիսուս Քրիստոսի մասին, ճիշտ այնպես, ինչպես Սամուելը:

ՆԱՄՈՆԵՐԸ՝ ՔԵՅԹ ԴՈՒՐՈՒԻ

Սեպտեմբերի 16-22-ը

Հավաքման խաղ

3 ՆԵՓԻ 1-7

Հիսուս Քրիստոսը խոստացավ, որ կհավաքի Իր բոլոր զավակներին, որովհետև Նա սիրում է բոլորին և ցանկանում է, որ նրանք ունենան ավետարանը (տես 3 Նեփի 5.24): Խաղացեք որևէ խաղ հավաքման մասին: Թող երեխաները շրջան կազմեն: Մեջտեղում գտնվողը իր մասին որևէ փաստ է ասում, օրինակ՝ իր սիրած գույնը: Եթե այդ փաստը ճիշտ է ուրիշների համար, ապա նրանք էլ են մոտենում կենտրոնին: Շարունակեք, մինչև բոլորը հավաքվեն մեջտեղում:

Կրտսեր խմբի երեխաների համար.

Պահմտոցի խաղացեք ձեր փոքրիկների հետ: Երբ գտնեք նրանց, ամուր գրկեք: Քննարկեք Հիսուս Քրիստոսի խոստումը, որ կհավաքի մեզ, անկախ նրանից, թե որտեղ ենք մենք:

Սեպտեմբերի 23-29-ը

Հիսուսը լույսն է

3 ՆԵՓԻ 8-11

Հիսուս Քրիստոսն է «լույսը և կյանքն աշխարհի» (3 Նեփի 9.18): Դիտեք արևածագը կամ մայրամուտը ձեր ընտանիքի հետ: Այնուհետև նկարեք ձեր տեսածը: Մինչ նկարում եք, խոսեք այն պատճառների մասին, թե ինչու եք սիրում Հիսուս Քրիստոսին, և ինչպես է Նա լույս տալիս ձեզ:

Կրտսեր խմբի երեխաների համար.

Դուրս եկեք բակ և նայեք տարբեր լուսատուների, ինչպիսիք են՝ արևը, աստղերը կամ լուսինը: Խնդրեք երեխաներին կիսվել, թե լույսը նրանց ինչ զգացողություններ է տալիս: Խոսեք այն մասին, թե ինչպես է Հիսուս Քրիստոսը լույս հանդիսանում մեզ համար: